№ 216 Դեկտեմբերի 4 (16) 1880 Դեկտեմբերի 4 (16) № 216

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաբաղաքացիք գրմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ"

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թ. ին

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետեւեալ օրերից)։

ՊՐՕԳՐԱՄՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետօն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 բուբլ, կէս տարվան 6 ր., հինգ ամս. 5 ր., չորս ամս. 4 ր., երեք ամս. 3. ր. երկու ամս. 2 ր. և մի ամս. 1 բուբլ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիւրքիայի ապագան։—Ներքին տեսութիւն։ Նամակ Ալէքսանդրապօլից։ Նամակ Մեղրիից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա։ Յունաստան։ Արեւելեան գործեր։ Նամակ Թիւրքիայից։—Յայտարարութիւններ։

ԹԻՒՐՔԻԱՅԻ ԱՊԱԳԱՆ

Անգլիական „Times" լրագիրը, խօսելով միացեալ նաւատորմի լուծվելու մասին, ասում է որ Անգլիան, առաջվայ պէս պատրաստ է մնում նպաստել արեւելեան խնդրի վճռելուն, բայց չուներով առանձին շահեր արեւելքում, նա չի յանձն առնի այդ խնդրի վճռելու ինիցիատիվը։

Դեռ երբ որ Ռիկօնֆիլդի մինիստրութիւնն ընկաւ և նրա տեղը բռնեց Գլադստօնի մինիստրութիւնը, մենք ասում էինք որ ազատամիտները անպատճառ կը պաշտպանեն Թիւրքիայի հպատակ քրիստոնեայ փոքր ազգութիւնները։ Բայց եթէ այդ փոքրիկ ազգութիւնների կողմն էլ չեն պահի, գոնէ հաստատ կարելի է ասել, որ Թիւրքաց կառավարութեան կողմն էլ չեն պահի։ Դա էլ կը լինի մի քայլ դէպի առաջ, եթէ Թիւրքիային կը թողնեն իր վիճակին. այն ժամանակ Թիւրքահպատակ քրիստոնեայ ազգերը իրանք կը տեսնեն իրանց գործը կառավարութեան հետ։

Եւ ճշմարիտ մինչև այժմ եւրոպական մեծ պետութիւններից ամեն մինը հերթով միշտ հովանաւորում էր Թիւրքիային, ղեկավարում էր նրա պետական գործերը, փող կամ զէնք էր հայթայթում Օսմանեան կառավարութեանը, խորհրդներ էր տալիս նրա պետական մարդիկներին։ Երբ որ Թիւրքիան եւրոպական մի պետութեան հետ պատերազմ ունէր, եւրոպական մի այլ պետութիւն բացարձակ կամ գաղտնի կերպով օգնում էր Թիւրքիային....

Ա յսպիսով Թիւրքիային երբէք չէին թողնում իր սեփական վիճակին, և այդպէս անուանված եւրոպական հաւասարակշռութիւնը պահպանելու նպատակով, Եւրոպան միշտ աշխատում էր օգնել Թիւրքիային և ցոյց տալ նրան աւելի զօրեղ, քան թէ նա է իրապէս։

Բայց թող փորձեն Թիւրքիային բոլորովին չօգնել, թող յանձնեն նրան իր սեփական վիճակին, և կը տեսնէք, որ այդ պետութիւնը ինքն իրան կընկնի, կը քայքայվի...

Եւրոպան, եթէ ճշմարիտ, չէ կամենում կամ չէ կարող անկեղծ կերպով օգնել Թիւրքահպատակ քրիստոնեայ ազգութիւններին քաղաքական վերականգնման, մեծ օգուտ տուած կը լինի թէ եւրոպական և թէ ասիական Թիւրքիայի քրիստոնեայ փոքր ազգութիւններին, եթէ բոլորովին չը խառնվի Օսմանեան կառավարութեան գործերի մէջ։ Եւ այն ժամանակ քրիստոնեայ ճընշված ազգերը իրանք կը տեսնեն իրանց հաշիւը կառավարութեան հետ։

Մի պետութիւն, որ իր թէ քաղաքական և թէ զինուորական պաշտօնեաներին երկու տարվայ ռոճիկը չէ վճարել, երկար տևել չէ կարող։

Մի բան երբէք չը պէտք է մոռանանք, այն է որ Թիւրքիան վաղուց կընկնէր, եթէ Եւրոպան նրան արուեստական կերպով պահպանած չը լինէր։

Ինչպէս երևում է, Գլադստօնի նպատակն է այժմ թողնել Թիւրքիային որ նա անպատիժ անի ամեն տեսակ սխալներ և անարգել ընթանայ դէպի իր կորուստը։

„Times" լրագրի խօսքերից երևում է, որ Գլադստօնի կարծիքով Անգլիայի շահերը չեն փնասվի, եթէ Թիւրքիայի քաղաքական իշխանութիւնը փոքր առ փոքր կանցնի նրա հպատակ քրիստոնեայ ազգութիւնների ձեռքը։

Եթէ Եւրոպան կամենում է կրկին միաձայն կերպով ներգործել Օսմանեան պետութեան վրա, Անգլիան էլ կը մասնակցի այդ ներգործութեանը, իսկ հակառակ դէպքում Անգլիան վրձռել է թողնել Թիւրքիային իր սեփական մահով մեռնելու։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

24 Նոյեմբերի

Զը գիտեմ ինչ պատճառներից ստիպված «Մեղուի» խմբագիրը կասկածի մէջ է ընկնում «Մշակի» 197 համարում տպված նամակիս վերաբերութեամբ, համարելով նրան կեղծ, որը պարոնի կարծիքով մի տեսակ գաւառանութիւն է։ Ես առանձին ուշադրութիւն չեմ դարձնում պարոնի խայտառակ զրպարտութիւններին, որոնք չռայլել է իմ անձնաւորութեան դէմ «Մեղուի» 88 համարում, այլ խոնարհաբար կը խնդրէի «Մշակի» խմբագրութիւնից ուղարկել պ. Սիմոնեանցին իմ նամակի իսկականը, որպէս զի փարատվի պարոնի կարծիքը։ Իսկ ինչ վերաբերում է նրա այն խօսքերին, թէ ես պատուաւոր անձն եմ, թէ թոկից փախած,—դրա մասին այժմ աւելորդ եմ համարում մի խօսք անգամ ասել, որովհետև ինձ ճանաչողը արդէն լաւ գիտէ, թէ որպիսի անձն եմ ես. միայն պ. Սիմոնեանցի կարծիքը կը փարատեմ այն ժամանակ, երբ պատիւ կունենամ անձամբ ծանօթանալ նրա հետ։

Զարմանում եմ, որ պ. Սիմոնեանցը դեռ չէ դադարել այն տղայական կարծիքներից, որ մի ժամանակ յայտնում էր, թէ «Մշակի» թղթակցութիւնները կեղծ են և չինվում են խմբագրատան մէջ։ Այդպիսի անձնաւորութեան հետ, իմ կարծիքով, աւելորդ է մինչև անգամ վիճաբանել, որովհետև պարոնի նպատակն է ոչ թէ վիճաբանել յարուցած հարցի մասին, այլ, ինչպէս ինքը ցոյց է տալիս «Մեղուի» 88 համարում, առանձին հաշիւներ ունի թղթակիցների անձնաւորութեան հետ, որը ամենևին հարցի հետ կապ չունի։

Սմբ. Պարսամեանց

ԴԱՄԱԿ ՄԵՂՐԻԻՑ

18 Նոյեմբերի

Անցեալ օրերումս մեր փողոցումն կարդացվում էր «Մշակի» № 163 ներքին լուրերում գրվածը. «Մեղրի գիւղից գրում են. տեղային տանուտէրի ընտրութեան երեք տարվայ ժամանակամիջոցը լրանում է. այս տարի յոյս կայ, որ ժողովուրդը վերջապէս կազատվի այդ անտանելի մարդուց և այլն»։ Մեր տանուտէր պ. Մ. Մելիք-Ասլանեանցը ինքն ևս նոյն լուրը կարդալով, կարծեց, թէ հազորդողը ես եմ. ուստի փողոցային հայհոյանքներից յետոյ, ասաց. «Ես ինչով եմ անտանելի՝ թող բացատրեն»։

Բոլորովին անուշադիր լինելով պարոնի հայհոյանքներին, միայն համակրելով այդ լուրը հաղորդողին, հարցնում եմ, արդեօք անտանելի չանուանէին՝ ապա ինչ անուանէին մի տանուտէրի, որպիսին իր ընտրութեան երեք տարվայ ժամանակամիջոցումն ոչ մի հրապարակական հաշիւ չէ ներկայացրել, այլ կանչել է չորս-հինգ անձինքների ասելով. «քաւոր-Գրիգոր, խնամի Յարութիւն, Հայրապետ-ապեր և այլն, համեցէք մեր տուն՝ բան ունիմ», և վերջը հաշիւից դուրս է եկել մի չարք պարսքերի հասարակութեան վրա, հասարակութեան այդ ինքնագլուխ ներկայացուցիչների չնորհիւ։ Նա գերեզմանատները քանդեց ու նրանց տեղ չինութիւն կանգնացրեց. իսկ գերեզմանատէրերը մնացին արտասվելով։ Նա գանգատաւորներից ու պատասխանատուներից երկու անգամ կաշառ ստացաւ թողնելով գործերը անվճիռ, իսկ մի քանիների էլ պահանջը պարտականից առնելով, փողը իրա գրպանումը դրեց, այլ և այլ անտեղի պատճառներ բերելով։ Նա պարսկաստանցի մշակներին բանեցրեց և պատճառ բռնելով թէ անցագիր չունեն, անվարձ արձակեց խեղճերին։ Նա ստացաւ մեր պ. գաւառապետից անցագրի վկայականներ, այն հիման վրա, որ ժողովուրդը Զանգեզուրի հեռաւորութեան պատճառաւ, վկայականը առաջարկի Նախիջևանի գաւառական գանձարանը, և ստանալով անցագիր՝ գնայ յօտարութիւն։ Բայց բանը ուրիշ կերպարանք ստացաւ. տանուտէրը բացի մարկայի փողը, իւրաքանչիւր վկայականի համար ստացաւ 1 ր. 40 կ., ասելով, թէ գանձարանին պէտք է հանի։ Ահա այսպէսի խաբեայութիւնների պատճառով ընկնում է պ. գաւառապետի վարկը, իսկ մի օտարութիւն գնացողից էլ ստանալով փող, տուեց նրան կեղծ անցագիր և նա կալանաւորվեց Նախիջևանումն։ Նա հասարակութեան աւելորդ ծախքերի մէջ է գցել տարեկան 300 ր. ինքն մաքրազարդելով։ Այսպիսի փողերի մէջ գլխաւոր տեղն են բռնում այն աստիճանաւորների ծախքերը, որոնք նրա տունը գալով, հասարակութիւնից ուտելիք են գնել ու արժէքը միանուագ տուել են տանուտէրին։ Նա զգուացրել է մեր այն չրջարնակներին, որոնք դէպի մեր գիւղը պատկառանքով են վերաբերվում, նրանց վրա զայրացրած անտեղի ակտերով։ Նա փողոցային մաքրութեան վրա ուշադրութիւն չը դարձրեց, և հիւանդութիւնները հետզհետէ չատանալով, գիւղը այժմ ներկայանում է իբրև մի մեծ հիւանդանոց։ Նա մշանջենաւոր քնի ենթարկեց մեր ծխական դպրոցի արդէն իրագործված խնդիրը, որպէս զի գիւղիս ուսման ղեկը մնայ իր նման կեղծ աստիճան ստացող տիրացուների ձեռքին։ Նա իր նման վաշխառուներին պաշտպան հանդիսանալով, փողի տոկոսիքը 8-ից հասցրեց մինչև 60% և աւելի։ Ահա այժմ 150 ծխից բաղկացած այն չէն Մեղրին, գերի է դարձել 10—15 անձնաւորութիւնների ձեռքում, այնքան բազմութիւն մարդկանց աշխատում են աշխատում, բայց չեն կարողանում պարտքի անտանելի տոկոսը վճարել։ Մինչև անգամ նա իրաւունք տուեց 7 տարեկան աղջիկը պսակել տալ 26 տարեկան երիտասարդի հետ։

Քանի այսպիսի բաներ գրեմ։ Զորն ասեմ կամ զորն խոստովանիմ։ Մեր տանուտէրի սխրագոր-

ծութիւններին հաշիւ չը կայ։ Աւելի գովութեան արժանի են մեր երկրորդական տանուտէրները, նրա հայրն ու եղբայրը, որոնք ոչ պակաս վնասեցին մեր հասարակութեան։ Մեղրեցիք էլ մի զարմանալի բնաւորութեան տէր են. եթէ մէկը իրա իրաւունքը պաշտպանելու համար հալածվում է տանուտէրից, իսկոյն չանթեր են թափում նրա վրա, թէ «տեղն է, քեզ ինչ, որ վատ բան արեց տանուտէրը։ Ախիր ինչ գործդ է. քու բաժին վնասը մի—երկու ռուբլ չէ, անխօս տուր, մինչև որ Աստուած ողորմած է»....

Վերջապէս, մեղրեցիք նեղ օրում են. այնպէս են կարծում, թէ անկարելի է տանուտէրից ընդհանուր հրապարակական հաշիւ պահանջել. այնպէս են կարծում, թէ մեր այս տանուտէրը երկնուստ իջած մի պատիժ է, որին պիտի համբերած մինչև անցնիլը, եթէ ոչ ուրիշ հնարք չը կայ. այնպէս են կարծում, թէ տանուտէրը կարող է իրա կիրքը լցուցանելու համար մէկին ծեծել, միւսին հայհոյել և մէկէլին բանտարկել կամ տուժել և դեռ ևս երազել մին քանի տարիներ էլ այդ պաշտօնը վարելու։ Իսկ իրանք մխիթարվում են նրանով միայն, որ երկու-երեքը հաւաքվելով մի առանձին տեղ, իրարից հարցանում են իրանց աղաւաղված լեզուով «պա հիւրդի արիք մեր մէալիքուն ձիքէն, ախէր մեր տունը լավ քէանդվալայ» (ապա ինչպէս անենք մեր տանուտէրի ձեռից, ահա մեր տունը բոլորովին քանդվեց)։

Այսքանով կարծեմ ամեն ինչ լոյսի պէս պարզվեց, և մեր տանուտէրը, որ վաղուցումն պահանջում էր, թէ «ես ինչով եմ անտանելի, թող բացատրեն», ես այսքանը միայն կարողացայ բացատրել, որոնց մէկն էլ կարօտութիւն չունի վերաստուգվելու, որովհետև նամակիս մէջ տեղ չեն ունեցել անձնականութիւն, կիրք և այլն. այլ մի դառն ճշմարտութիւն, վերաբերվող մեր ողորմելի հասարակութեան ներկայացուցչի ճարպիկութիւններին։

Այժմ դառնում եմ դէպի իմ յարգելի հասարակութիւնը, որ նա բաւական համարի այսքան երկարօրէն քնելը. հասկանայ իր իրաւունքները, գէթ օրինակ առնելով դրացի հասարակութիւններից, չը վախենայ տանուտէրի ինտրիգաներից, որ և հասկանայ, որ բռնակալի դարը անցել է, և ընկած հասարակութիւնը վերականգնելու համար նոր տանուտէրի օրինաւոր ընտրութիւն թող անէ, այն առածի համեմատ, թէ «լաւ է որ մի հնդկաստանցի փչանայ, քան բոլոր Հնդկաստանը»։

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են, որ մի պարոն, բարեկամանալով փոստատան ծառայողներից մէկի հետ, գողանում է «Մշակի» խմբագրատան անունով ուղարկված նամակները։ Երբ այդ լուրը կը ստուգվի, մենք կը յայտնենք պարոնի անունը։

—

Շատ անգամ յայտնել ենք մեր թղթակիցներին, որ իրանց նամակները որքան կարելի է պարզ գրեն և տողերի մէջ փոքր ինչ լայն տեղ թողնեն։ Երբեմն ստացվում են այնպիսի նամակներ, որոնց մեկանը այնքան դժնատ է, որ բոլորովին չէ կարդացվում։

—

Դարձեալ խնդրում ենք մեր բաժանորդներից, որոնց վրա «Մշակի» այս տարվայ ապառիկներ են մնացել, ուղարկել մեզ շուտով իրանց վրա մնացած պարտքը։

—

«Մշակի» խմբագրատունը բաց է ամեն օր, բացի կիրակի օրերից, առաւօտեան 10 ժամից մինչև 2 ժամ և երեկոյեան 4 ժամից մինչև 6 ժամ։

—

Ինչպէս յայտնեցինք մեր անցեալ համարում, ԹԻՖԼԻՍ հասաւ ամերիկական մի խումբ, Վերոնի-Վեստ պարոնի առաջնորդութեամբ։ Այդ խումբը բաղկացած է 8 անձինքներից, չորս կանանցից և չորս տղամարդիկներից։ Նրանք տալիս են կոնցէրտներ և բալէտներ։ Մանաւանդ, ինչպէս երևում է, ամեն տեղ մեծ փուրոր է արել 38 զանգակների վրա ածած մեծ կոնցէրտը։ Թէ կանայք և թէ տղամարդիկ պար են գալիս այլ և այլ պարեր։ Այդ խումբը, ինչքան կարողացանք ծանօթանալ լրագիրների քննութիւններից, մեծ հռչակ ունի և ամբողջ աշխարհի ամենաբնեալի քաղաքներում իր կոնցէրտներ և բալէտներ է տուել և միշտ ամեն տեղ մեծ համակրութեամբ է ընդունվել հասարակութիւնից։

—

Մեզ գրում են ԱՍՏՐԱԽԱՆԻՑ հետևեալը։ «Մեր հոգևոր դպրոցները ուսումնական տարվայ սկզբից մինչև այժմ մնացած են առանց օրինաւոր հոգաբարձութեան, միայն մի աշխարհական և մի հոգևորական են կառավարում նրանց։ Հոգևոր կառավարութիւնը օգուտ քաղելով ժողովրդի անտարբերութենից, ժողով չէ կայացնում նոր ընտրութեան համար, ասելով թէ իրան հաճելի է այս երկուսի կառավարութիւնը։ Նրա հրամանով տէր Յովսէփ քահանայ Բունիաթեանց այս տարի բացեց երկրորդ դասատուն տղայոց համար, և այդ դասատան աշակերտները մինչև այն ատիճան անպատրաստ են, որ իրանք ուսուցիչները խոստովանվում են թէ այս տարի նրանցից ոչինչ չի դառնայ։ Բայց, այնու ամենայնիւ հասարակութիւնը պիտի ծախսէ այս դասատան վրա տարեկան մօտ 800 ռուբլ։»

—

ԹԻՖԼԻՍԻ քաղաքային վարչութիւնը յայտնում է հետևեալ տակսա առաջին հարկաւորութեան ուտելիքների վրա դեկտեմբերի 1-ից մինչև յունվարի 1-ը եկող 1881 թ։ Հացի ֆունտը, որ թխված է կրուպչատկա ասված ալիւրից առաջին տեսակի արժէ 6 կոպ., երկրորդ տեսակի $5^1/_2$ կոպ., խառն ցորենի ալիւրի հետ ֆունտը $4^1/_2$ կոպ։ Թոնրի մէջ թխած հացի ֆունտը առաջին տեսակի $6^1/_2$ կոպ., երկրորդ 5 կ., լաւաշներ առաջին տեսակի $7^1/_2$ կ., երկրորդ 6 կ., երրորդ $5^1/_2$ կ.։ Տաւարի մսի ֆունտը առաջին տեսակի 10 կ., երկրորդ 8 կոպ., ֆիլէյ 16 կոպ., ոչխարի մսի ֆունտը 10 կոպ., խոզի մսի ֆունտը առաջին տեսակի 11 կոպ., երկրորդ տեսակի 10 կոպ։

—

Այս օրերս հրատարակվեցաւ ԹԻՖԼԻՍՈՒՄ Ց. Մարտիրոսեանցի տպարանում Նիկողայոս Ա. Լիխաչեանցի «Երուանդ երկրորդ» ողբերգութիւնը։ Թիֆլիսեցիները կարող են գիրքը ստանալ Մարտիրոսեանցի տպարանում, իսկ օտարաքաղաքացիք կարող են ուղղակի հեղինակին Մայկօպ քաղաքը դիմել, կանխիկ վճարելով երկու ռուբլ։

—

Մայրաքաղաքի լրագիրները պաշտօնապէս հաղորդում են որ Երևանի և Ռութայիսի նահանգների վարժապետանոցները բարձրագոյն հաստատված են։

—

Ընթերցողին արդէն յայտնի է հեռագրից որ աղի վրա ակցիզը նորերումս վերցվեցաւ Ռուսաստանում բարձրագոյն հրամանով։ Բոլոր ռուսաց լրագիրները մեծ գովասանքներով են խօսում կառավարութեան այդ կարգադրութեան մասին։

—

Ռուսաստանում գրեթէ ամեն օր նոր լրագիրներ և ամսագիրներ սունկերի պէս են բուսնում։ Եկող տարվանից կը հրատարակվի Մոսկվայում մի ամենօրեայ թերթ «Московскій Телеграфъ» որի խմբագիրն է Բոգդէվիչ, իսկ Ս. Պետերբուրգում մի պատմական և գրականական ամսագիր Կոմս Սալիասի խմբագրութեամբ «Полярная Звѣзда» վերնագրով։

—

Մեզ հաղորդում են, որ ԹԻՖԼԻՍԻ վաճառականներից մինը Ս. Տ. Ա. իբր թէ մի չինովնիկ պարտամուրհակ է չինել ուրիշ մի վաճառականի, Ա. Ե-ի վրա, ութ հազար բուբլ գումարի, որ կանխիկ վճարած է, առաջին պահանջմամբ ստանալու պայմանով։ Ասում են որ հասարակ թղթի վրա գրված պարտամուրհակը ճշմարիտ ստորագրված է Ա. Ե-ի իսկական ձեռքով, միայն թէ դա եղել է մի անմեղ թղթի կտոր, որի վրա գրված էր պարոնի ստորագրութիւնը, իսկ Ս. Տ. Ա. պարտամուրհակի բովանդակութեամբ գրութիւնը աւելացրել է վերևից։ Գործը յանձնված է արդէն Նահանգական դատարանին, որ և կը քննվի այս դեկտեմբերի 5-ին։ Բոլոր վաճառականները վրդովված են։

ԵՐՏԱՐԻՆ ՏԵՂԵՐԻՆ

ԹԻՒՐՔԻԱ

—

Վանէն հետևեալը կը գրեն. «Մէկ ամիս է որ Լոնդոնի արքունական թանգարանի կողմէն հնախոյզ մը խրկուած է հոս Վասպուրականի հնութիւնները քննելու և իրենց դարաւոր քունէն զարթուցանելու. այդ անձն է հանրածանօթ Հօրմուզդ Բասամ որ Կ. Պոլսոյ նախորդ Անգլիական դեսպան Սըր Լէյըրտի հետ 40 տարի առաջ Ինջ-Նինուէի և Բաբիլոնի հնութիւնները խուզարկած է։ Պ. Բասամ՝ կառավարութենէն երկու տարուան համար արտօնութիւն ստացած է Վասպուրական գաւառին մէջ գտնուող բոլոր աւերակները խուզարկելու. նա սկսաւ քաղաքիս հարաւային կողմը գտնուած հողաբլուրը փորելու, ուր բաւական հետաքրքրութիւն շարժող հնութիւնք գտնուեցան։ Թուրքերը «Թօփրադ Գալէ» կը կոչեն այդ տեղն, որ կը նշանակէ հողաբերդ, և յիրաւի թէ տեղւոյն դիրքէն և թէ՝ գտնուած իրերէն կրնայ դիւրաւ մակաբերուիլ որ դա բերդ—աշտարակի նման բակ մը պէտք է եղած լինի. Պ. Բասամ կըսէ թէ Մինուազ Ա. Ասորեստանցւոց թագաւորի ժամանակէն այսինքն 3000 տարուան է այս հնութիւնը։ Դժբաղդաբար այն ատիճան փտած են գտնուած բաներն, որ մարդ ձեռք դպցուցածին պէս կը փշրին և փոշւոյ կը վերածուին. պղնձեայ վահաններ գտնուեցան առիւծի նկարներով և բևեռագիր արձանագրութեամբ. հողէ շինուած բառչեր (կըժիր), փղոսկրէ քանդակեալ կռոց պատկերներ, արոյրէ թափծու ցուլի գլուխներ խիստ նուրբ արհեստագործուած, նետի սլաքներ և խոշոր գամեր դուրս բերուեցան հողակոյտերու տակէն, և ի վերջոյ յղկեալ փայլուն սև քարերէ կառուցեալ մի հոյակապ շէնքի մնացորդները երևան եկան, որոնց վրայ ամեն տեսնող զարմացած է։ Պ. Բասամ նաև թէ՝ Վանայ բերդին վրայ եղած և թէ՝ եկեղեցւոյ և վանքերու մէջ պահուած բևեռագիր արձանագրութեանց օրինակներն առաւ Անգղիա խրկելու համար։ Նա այս շաբթու կը մեկնի ասկէ Բաղէշ, Սղերդ, Մուսուլ և Պաղտատ երթալու և այդ տեղուանքն ալ հնախօսական խուզարկութիւններ ընելու։ Պ. Բասամ ազգով Ասորի է, բայց լաւ Անգղիերէն կը խօսի։

Գոհութեամբ կիմանամք թէ Պարոնայք Առաքել Խնտամեան և Յովսէփ Բարաքոչեան որք մայրաքաղաքիս երկրաչափական (Փոնդ է շօսէ) վարժարանին մէջ իրենց ուսումն աւարտած և վկայական ստացած էին, Սեբաստիոյ նահանգին երկրաչափ ճարտարապետ անուաներ են, Բարաքոչեան Պ. Յովսէփ անտառաբանութեան վարժարանէն ևս վկայական ստացած էր։

Գնր. Հասունեան երէկ մայրաքաղաքէս մեկնեցաւ ի Հռոմ, կարդինալութեան փեղջոյն ստանալու համար։

Նորա բացակայութեան միջոցին Գնր. Ազարեան՝ Պատրիարքական տեղապետութիւն պիտի ընէ։

Երէկուան Մէսէնճերի մէջ կը կարդամք թէ ոստիկանութեան նախարարը՝ պահպանելու վրայ Հայաստանի հին թագաւորաց պատկերները կամ նմանութիւնները կրող սիկարի թուղթերուն վաճառումն արգիլեր է։

(Մասիս)

ՅՈՒՆԱՍՏԱՆ

—

ԱԹԷՆՔԻՑ „Polit. Corresp.“ լրագրին հաղորդում են նոյեմբերի 21-ից, որ յունական ազգային ժողովի իսկական պարապմունքները դեռ նոր են սկսվել, որովհետև պատերազմական, ծովային և ֆինանսների մինիստրները նորերումս առաջարկեցին ժողովին իրանց նախագիծները, որոնց քննելը ժողովը անմիջապէս սկսեց։ Մինիստրները պահանջում են նոր կարգադրութիւններ զինուորական ատիճանների մասին և առանձին կրեդիտ մի քանի պատերազմական նոր նաւեր գնելու համար։ Բացի այդ մինիստրները առաջարկում են յունական վանքերը, գիմնազիաները և այլ դպրոցները հիւանդանոցներ դարձնել, իսկ յունական զօրքերի թիւը հասցնել 80,000-ի։ Այս բոլորից երևում է, որ Յունաստանը մտադիր է վճռողական գործողութիւններ ըսկսել։ Դժուար է ենթադրել, որ դիպլոմատական ճնշումները կարողանան արգելել Յունաստանին պատերազմի սկսելը։ Ամեն բանից երևում է, որ մեծ պետութիւնները անուշադիր չեն թողնում յունական խնդիրը։ Չը նայելով, որ Յունաստանը ահագին ծախսեր է անում, նրա ֆինանսների դրութիւնը այնքան լաւ է, որ Նորերումս կարողացաւ 1824 թուականի փոխառութեան հաշւում վճարել Լօնդօնի բանկին երկու անգամ աւելի քան թէ հարկաւոր էր։

ԱԹԷՆՔԻՑ «Daily News» լրագրին գրում են նոյեմբերի 29-ից, որ յունական թագաւորը ընդունեց Ֆրանսիական դեսպանին, որի հետ նա նոյն քաղաքավարութեամբ վարվեց, ինչպէս գերմանական դեսպանի հետ, բայց այնուամենայնիւ չը խոստացաւ, որ Յունաստանը կը դադարի զինաւորվելուց։ Գործը այնպիսի դիրք է ստացել, որ անպատճառ պէտք է կատարվի Բերլինի կոնֆերենցիայի վճիռը։ Թագաւորը խոստացաւ չափաւոր լինել, որովհետև այդ բանը խնդրում են Ֆրանսիա և Գերմանիա, Յունաստանի բարեկամ պետութիւնները, բայց նա չի արձակի յունական զօրքերին, մինչև Յունաստանը չը ստանայ Էպիրոս և Թէսալիա։ Գրեթէ հաստատ կարելի է ասել, որ գարնանը պատերազմ կը սկսվի Յունաստանի և Թուրքիայի մէջ, եթէ այս վերջինը զիջումներ չի անի Բերլինի կոնֆերենցիայի վճռի համեմատ։

Նոյն լրագրին ԱԹԷՆՔԻՑ հաղորդում են, որ լորդ Գրենվիլի նորերումս խօսած ճառը շատ յաւ տպաւորութիւն գործեց Յունաստանի մէջ։ Ժամանակ էր, որ անգլիական մինիստրներից մէկը մի քանի քաջալերական խօսք արտասանէր յունական խնդրի վերաբերութեամբ, մանաւանդ որ մի քանի պետութիւններ սաստիկ ճնշում էին գործում Գէորգ թագաւորի վրա, որ նա փոխէր իր քաղաքականութիւնը։ Յունաստանը չէ կարող հրաժարվել իր պահանջներից և նրան կարող է բաւականացնել Բերլինի կոնֆերենցիայի որոշած սահմանը։ Պատերազմական պատրաստութիւնները աջողութեամբ առաջ են գնում և դրամական պակասութիւն չը կայ։ Գերմանական դեսպանը կը մնայ ԱԹԷՆՔԻ մէջ գոնեա վեց ամիս և դրանից երևում է, որ իշխան Բիսմարկ մտադիր է իր ազդեցութեան տակ պահել յունական թագաւորին։ Բայց մինչև անգամ Բիսմարկի ահագին ազդեցութիւնը անկարող է պատերազմի առաջն առնել եթէ սուլթանը չը զիջէ Թէսալիա և Էպիրոս։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳՈՐԾԵՐ

—

Լօնդօնի „Times“ լրագրին Վիէննայից հեռագրում են, որ նոյեմբերի 26-ին, ինչպէս պայմանաւորված էր, սկսվեցաւ Դուլցինիօի յանձնելը չերնոգորցիներին։ Երեկոյեան ժամի 6-ին չերնոգորցիները արդէն գրաւել էին թէ Դուլցինիօ և թէ նրա չորջակայ ամրացած բարձրութիւնները։ Ամեն բան այնպէս կանոնաւոր կատարվեցաւ, կարծես պահապանները էին փոխվում։ Ամենից առաջ չերնոգորցիները գրաւեցին Մարտոյի բարձրութիւնները, որտեղ մնացին